

Հավելված 1

«ՀԱՄԱՉԱՅՆԵՑՎԱԾ Է»

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ վարչության
« 23 » հունիսի 2006թ.
թիվ 01/109-393L որոշմամբ

Վարչության նախագահ՝

Ա. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ _____

«ՀԱՍՏՍՏՎԱԾ Է»

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ խորհրդի
« 30 » հունիսի 2006թ.
թիվ 118L որոշմամբ

Խորհրդի նախագահ՝

Կ. ՄԱՅԱՐՅԱՆ _____



«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԾՆԵՐ

1.1. Սույն փաստաթուղթը սահմանում է «Արդշինհնվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և պարտադիր է Բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների համար:

1.2. Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականությունն իր մեջ ներառում է այն կոնկրետ սկզբունքները, հիմունքները, կանոնները, եղանակները, ձևերը և ընթացակարգերը, որոնք Բանկն ընտրում է իր հաշվապահական հաշվառումը վարելու, ֆինանսական հաշվետվությունները կազմելու և ներկայացնելու համար:

1.3. Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը մշակված է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից համատեղ հաստատված կարգերի, այլ օրենքների և նորմատիվ իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների (ՀՀՀՀՍ) պահանջներին համապատասխան:

1.4. Բանկի Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է բավարարի հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների կազմման հետևյալ սկզբունքներին.

- **անընդհատության սկզբունք՝** Բանկը շարունակելու է իր գործունեությունը տեսանելի ապագայում և միտում չունի լուծարվելու կամ կրճատելու իր գործունեության ծավալները:

- **արժանահավատության սկզբունք՝** ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող տեղեկատվությունը պետք է ճշմարիտ ներկայացնի կազմակերպության ֆինանսական վիճակը, ինչպես նաև արտացոլի՝

- ա) ոչ միայն իրավական կողմը, այլ նաև դեպքերի և գործառնությունների տնտեսական բովանդակությունը,

- բ) լինի չեզոք, գերծ մնա կանխակալությունից,

- գ) լինի հաշվենկատ,

- դ) լինի ամբողջական բոլոր էական դրսևորումներում:

- **հաշվեզրման սկզբունք՝** տնտեսական գործառնությունների և դեպքերի արդյունքները ճանաչվում և հաշվապահական հաշվառման մեջ գրանցվում են այն ժամանակակետից, երբ դրանք տեղի են ունեցել, անկախ դրանց հետ կապված դրամական միջոցների վճարման կամ ստացման ժամկետից, և արտացոլվում են այն ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են,

- **հասկանալիության սկզբունք՝** ֆինանսական հաշվետվություններում պարունակվող տեղեկատվությունը պետք է հասկանալի լինի օգտագործողներին,

- **էականության և միասնականության սկզբունք՝** ֆինանսական հաշվետվություններում յուրաքանչյուր էական հոդված պետք է ներկայացվի առանձին, իսկ ոչ էական հոդվածները՝ միավորված,

- **համադրելիության սկզբունք՝** տարբեր ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները պետք է համադրելի լինեն,

- **հաշվանցման սկզբունք՝** ակտիվները, սեփական կապիտալը և պարտավորությունները, ինչպես նաև եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցումը պահանջվում կամ թույլատրվում է հաշվապահական հաշվառման ստանդարտներով կամ օրենքով,

- **սահմանազատման սկզբունք՝** Բանկի ակտիվները և պարտավորությունները պետք է առանձնացված լինեն հիմնադիրների կամ այլ կազմակերպությունների ակտիվներից և պարտավորություններից,

- **հետևողականության սկզբունք՝** հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հետևողական լինի մի ժամանակաշրջանից մյուսը, բացառությամբ, եթե.

- էական փոփոխություններ են տեղի ունենում Բանկի գործառնությունների բնույթում, կամ՝
- հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության միջոցով տրվում է առավել էական տեղեկատվություն, կամ
- հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի մեջ փոփոխություններ են տեղի ունեցել:

ԳԼՈՒԽ 2. ԲԱՆԿԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

2.1. Կանխիկ դրամական միջոցներ.

2.1.1. Բանկի կանխիկ դրամական միջոցների փաստացի ներհոսքի և կամ արտահոսքի ձևակերպումը կատարվում է արժույթների անվանական արժեքով՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված և պատշաճ կերպով կազմված վճարահաշվարկային փաստաթղթերի հիման վրա:

2.2. Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամներ.

2.2.1. Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամներ հաշիվներում հաշվառումը վարվում է ձեռքբերման արժեքով, այնուհետև կատարվում է վերագնահատում իրական արժեքի հիման վրա՝ վերջինիս փոփոխության դեպքում:

2.3. Ֆինանսական ակտիվների ճանաչման ամսաթիվը.

2.3.1. Ֆինանսական ակտիվները հաշվապահական հաշվեկշռում ճանաչվում են՝ հիմք ընդունելով իրականացված վերջնահաշվարկի ամսաթիվը: Այսինքն, ֆինանսական ակտիվը հաշվեկշռում ճանաչվում կամ հաշվեկշռից դուրս է գրվում, երբ դրա նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է:

2.4. Ներդրումներ արժեթղթերում.

2.4.1. Արժեթղթերում կատարվող ներդրումները ըստ նպատակայնության բաժանվում են երեք խմբի՝

- ա) առևտրային նպատակներով պահվող արժեթղթեր,
- բ) վաճառքի համար մատչելի արժեթղթեր,
- գ) մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր:

2.4.2. Առևտրային նպատակներով պահվող ներդրումները Բանկը պահում է հիմնականում գների կամ դիվերսիան հավելագրերի կարճաժամկետ տատանումներից եկամուտ ստանալու նպատակով:

2.4.3. Վաճառքի համար մատչելի ներդրումները այն ներդրումներն են, որոնք Բանկը չի պահում մինչև մարման ժամկետը և որոնք Բանկի կողմից տրամադրված փոխառություններ և դեբիտորական պարտքեր չեն հանդիսանում:

2.4.4. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները այն ֆիքսված վճարումներով կամ ֆիքսված մարման ժամկետ ունեցող ներդրումներն են, որոնք Բանկը պահում է մինչև մարման ժամկետը և որոնք Բանկի կողմից տրամադրված փոխառություններ և դեբիտորական պարտքեր չեն հանդիսանում:

2.4.5. Առևտրային նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի ներդրումների նախնական գրանցումը կատարվում է ձեռքբերման (սկզբնական) արժեքով, իսկ այնուհետև իրական արժեքով: Իրական արժեքի յուրաքանչյուր փոփոխության դեպքում ներդրումների վերագնահատում է կատարվում: Բանկն իր «ֆինանսական արդյունքների մասին» հաշվետվությունում արտացոլում է ինչպես առևտրային նպատակներով պահվող, այնպես էլ վաճառքի համար մատչելի արժեթղթերի վերագնահատման արդյունքները:

2.4.6. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գրանցումը կատարվում է ձեռքբերման (սկզբնական) արժեքով, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եթե մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ձեռք են բերվել կա՛մ գեղչատոկոսով կա՛մ հավելավճարով, ապա անվանական արժեքի և ձեռքբերման գնի տարբերությունները ամորտիզացվում են՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

2.4.7. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի «ա» ենթակետի և «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգի» համաձայն՝ Բանկը ձևավորում է ինվեստիցիոն արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստ:

2.4.8. Բանկը ժամկետային արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստին մասհանումներ է կատարում հետևյալ չափերով՝

- ոչ ռիսկային արժեթղթերի համար՝ 2%,
- ռիսկային արժեթղթերի համար՝ 2%-20%,
- միջին ռիսկային արժեթղթերի համար՝ 20% -70%,
- բարձր ռիսկային արժեթղթերի համար՝ 70%-100%,
- անհուսալի արժեթղթերի համար՝ 100%:

2.4.9. Ելնելով ֆինանսական հաշվետվություններում ճշմարիտ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունից՝ Բանկը կարող է փոփոխել վերոնշյալ սահմանաչափերը:

2.5. Տրամադրված վարկեր և դեբիտորական պարտքեր.

2.5.1. «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի համաձայն՝ Բանկը ձևավորում է վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ: Ընդ որում պահուստը ձևավորվում և ճշգրտվում է յուրաքանչյուր բանկային օրվա կտրվածքով:

2.5.2. Բանկը վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստներին մասհանումներ է կատարում հետևյալ չափերով՝

- ստանդարտ ակտիվների համար՝ 1%,
- հսկվող ակտիվների համար՝ 10%,
- ոչ ստանդարտ ակտիվների համար՝ 20%,
- կասկածելի ակտիվների համար՝ 50%,
- անհուսալի ակտիվների համար՝ 100%:

2.5.3. Ելնելով ֆինանսական հաշվետվություններում ճշմարիտ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունից՝ Բանկը կարող է ավելացնել սույն Քաղաքականության 2.5.2 կետում նշված սահմանաչափերը:

2.6. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ.

2.6.1. Բանկը հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները հաշվեկշռում ճանաչում է այն ժամանակ, երբ հավանական է, որ.

- այդ ակտիվներին վերագրելի տնտեսական օգուտները կհոսեն դեպի Բանկ, և
- այդ ակտիվները ունեն արժեք, որը կարող է արժանահավատորեն չափվել:

2.6.2. Բանկը հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները հաշվեկշռում ճանաչում է իրենց սկզբնական արժեքներով (ինքնարժեքներով): Ակտիվների ինքնարժեքները ընդգրկում են այդ ակտիվների ձեռքբերման գները, ներկրման տուրքերը, հարկերը, տեղակայման հետ կապված ծախսերը և պարտադիր այլ վճարները, որոնք ենթակա չեն Բանկին վերադարձման, ինչպես նաև ակտիվները իրենց նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած ծախսումները:

2.6.3. Բանկը պարբերաբար՝ յուրաքանչյուր տարի, մինչև ֆինանսական տարվա վերջը, կատարում է իր հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատում: Վերագնահատման արդյունքները Բանկը ձևակերպում է՝ համաձայն ՀՀՀՀՍ 16-ի և ՀՀՀՀՍ 38-ի:

2.6.4. Հիմնական միջոցների վրա կատարված հետագա ծախսումները ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին, եթե դրանք կատարվում են ապագա տնտեսական օգուտները վերականգնելու կամ պահպանելու նպատակով: Բանկը հիմնական միջոցների վրա կատարված հետագա ծախսումները ավելացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքին միայն այն դեպքում, երբ դրանք բարելավում են ակտիվի վիճակը՝ ապահովելով ապագա տնտեսական օգուտների ավելի մեծ ներհոսք:

2.6.5. Ֆինանսական հաշվետվությունում արժանահավատ տեղեկատվություն ներկայացնելու և հարկվող շահույթը որոշելու նպատակով՝ Բանկը կատարում է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա՝ կիրառելով գծային մեթոդը:

2.6.6. Բանկը հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան կատարում է հետևյալ սահմանված ժամկետներում.

- շենքեր, շինություններ և փոխանցվող հարմարանքներ՝ 20 տարի,
- հաշվողական և համակարգչային տեխնիկա՝ 1 տարի,
- այլ հիմնական միջոցներ՝ 5 տարի,
- մինչև 50 հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցը՝ 1 տարի,
- ոչ նյութական ակտիվները՝ 10 տարի:

2.7. Արագամաշ առարկաներ.

2.7.1. Արագամաշ առարկաներին վերաբերում են այն ակտիվները, որոնց ծառայության ժամկետը չի գերազանցում մեկ տարին՝ անկախ դրանց արժեքից: Այդ ակտիվների թվին են դասվում՝ պահեստամասերը, սպասարկող սարքավորումները, գործիքները և հարմարանքները, արտադրական և տնտեսական գույքը, հատուկ հագուստը:

2.7.2. Արագամաշ առարկաների արժեքը դուրս է գրվում ծախսերի համապատասխան հաշիվներին վերջիններիս շահագործման հանձնելու պահին՝ կիրառելով ՖԻՖՈ մեթոդը:

2.8. Վարձակալություն.

2.8.1. Ֆինանսական վարձակալությունը՝ վարձակալության տեսակ է, որի դեպքում վարձակալին են փոխանցվում վարձակալված հիմնական միջոցի սեփականության իրավունքի հետ կապված գրեթե բոլոր ռիսկերը և օգուտները: Սեփականության իրավունքը, ընդհանուր առմամբ, կարող է փոխանցվել կամ չփոխանցվել:

2.8.2. Գործառնական վարձակալությունը՝ ֆինանսական վարձակալություն չհանդիսացող վարձակալություն է:

2.8.3. Ֆինանսական վարձակալության ժամանակ, եթե Բանկը հանդիսանում է վարձակալ, ապա վարձակալված հիմնական միջոցը Բանկը ճանաչում է իր հաշվեկշռում՝ վերջինիս իրական արժեքով:

2.8.4. Վարձակալված հիմնական միջոցի մաշվածությունը հաշվարկում է Բանկը և համապատասխան ծախսը ճանաչում է իր հաշվեկշռում: Վարձակալված հիմնական միջոցի մաշվածությունը հաշվարկվում է սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման սկզբունքով:

2.8.5. Եթե Բանկը ֆինանսական վարձակալության ժամանակ հանդիսանում է վարձատու, ապա վարձակալությամբ տրամադրված ակտիվը դուրս է գրում իր հաշվեկշռից հաշվեկշռային արժեքով: Բանկը հաշվեկշռային արժեքի և իրական արժեքի դրական տարբերությունը ճանաչում է որպես հիմնական միջոցի վաճառքից ստացված օգուտ, իսկ իրական արժեքի և նվազագույն վարձավճարների տարբերությունը՝ ֆինանսական վարձակալությունից չճանաչված տոկոսային եկամուտ և ճանաչում է որպես դեբիտորական պարտք:

2.9. Հաշվարկներ բանկի և մասնաճյուղերի միջև.

2.9.1. Բանկի գլխավոր գրասենյակի և մասնաճյուղերի միջև հաշվեկշիռների համադրման նպատակով, ինչպես նաև հետագա վերահսկողության համար, մասնաճյուղերը յուրաքանչյուր աշխատանքային օրվա հաշվեկշիռը Բանկի Lotus Notes էլեկտրոնային համակարգով (էլեկտրոնային կապի այլ միջոցներով, մագնիսական կրիչներով) ուղարկում են Բանկի գլխավոր գրասենյակ:

2.9.2. Բանկի՝ յուրաքանչյուր աշխատանքային օրվա ամփոփ հաշվեկշիռը կազմելիս՝ «Հաշվարկներ Բանկի և իր ռեզիդենտ մասնաճյուղերի միջև» հաշիվները գրոյացվում են:

2.10. Արտարժույթային փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները.

2.10.1. Բանկն իրականացնում է ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով արտահայտված գործառնություններ: Բանկը, օրենքով սահմանված կարգով, հաշվապահական հաշվառումը վարում և ֆինանսական հաշվետվությունները կազմում և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արժույթով, որն էլ հանդիսանում է հաշվետվական արժույթ:

2.10.2. Արտարժույթով արտահայտված գործառնությունները Բանկը սկզբնապես գրանցում է հաշվետվական արժույթով, կիրառելով գործարքի օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի նկատմամբ սահմանված հաշվարկային փոխարժեքը:

2.10.3. Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են ՀՀ Կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքի տատանումներից, Բանկը ճանաչում է որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

2.11. Եկամուտներ և ծախսեր.

2.11.1. Հաշվեգրման սկզբունքի համաձայն՝ Բանկը կատարում է հաշվեգրում, ինչպես եկամուտների և ծախսերի, այնպես էլ աճնակազմի գծով ստանձնած իր պարտավորությունների դիմաց, ինչպես նաև երաշխիքային հիմնադրամին և այլ վճարվելիք գումարների մասով:

2.12. Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր.

2.12.1. Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքերը այն բարենպաստ և ոչ բարենպաստ դեպքերն են, որոնք տեղի են ունենում հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի և այն ամսաթվի միջև ընկած ժամանակաշրջանում, երբ ֆինանսական հաշվետվությունները վավերացվում են օրենսդրությամբ սահմանված հասցեներով ներկայացնելու համար:

2.12.2. Բանկը կատարում է հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող այն դեպքերի ճշգրտում, որոնք հաստատում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գոյություն ունեցող իրավիճակները:

2.12.3. Վերոնշյալ դեպքերը Բանկը ճշգրտում է մինչև ֆինանսական հաշվետվությունները բաժնետերերի ժողովին ներկայացնելը:

2.12.4. Բանկը հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքերի ճշգրտում է կատարում միայն այն ժամանակ, երբ այդ դեպքերի գումարները կազմում են կապիտալի մեկ և ավելի տոկոսը:

2.12.5. Ելնելով ֆինանսական հաշվետվություններում ճշմարիտ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունից՝ Բանկը կարող է սույն քաղաքականության 2.12.4 կետով սահմանված տոկոսը փոխել:

2.12.6. Եթե ճշգրտման ենթակա դեպքերը ի հայտ են եկել տարեկան ֆինանսական հաշվետվությունները Բանկի բաժնետերերի ժողովին ներկայացնելուց և վերջինիս կողմից հաստատվելուց հետո, ապա նման դեպքերում ճշգրտումներ չեն կատարվում և Բանկը համարում է, որ նման տեղեկատվության վերաներկայացումն անիրագործելի է:

2.13. Էական սխալների ճշգրտում.

2.13.1. Բանկը նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող էական այն սխալների ճշգրտում է կատարում, որոնք հայտնաբերվել են ընթացիկ ժամանակաշրջանում:

2.13.2. Բանկը կատարում է էական սխալի ճշգրտում միայն այն ժամանակ, երբ այդ սխալը կազմում է գուտ շահույթի 5 և ավելի տոկոսը:

2.14. Գլխավոր պահուստ.

2.14.1. Բանկը յուրաքանչյուր տարի հարկումից հետո մնացած շահույթի ոչ պակաս քան 5%-ը ուղղում է գլխավոր պահուստի համալրմանը՝ մինչև գլխավոր պահուստի գումարը կհամալրվի կանոնադրական կապիտալի 15%-ից ոչ պակաս չափով:

ԳԼՈՒԽ 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Սույն քաղաքականությունում փոփոխությունները և լրացումները կատարվում են Բանկի խորհրդի կողմից:

3.2. Սույն քաղաքականությունը գործողության մեջ է դրվում Բանկի խորհրդի որոշմամբ սահմանված ժամկետում:

3.3. Սույն Զաղաքականությամբ սահմանված դրույթների ոչ պատշաճ կատարումը կարգապահական պատասխանատվություն է առաջացնում Բանկի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների համար՝ օրենքով սահմանված կարգով: